




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԻԿԱՆ ՍԻՐԱԳԹԸՆԻՔԸՆՆԵՐԸ



ՍՍՌԱ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ



11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

24

25

26

27

28

29

30

31

32

33

34

35

36

37

38

39

40

41

42

43

44

45

46

47

48

49

50

51

52

53

54

55

56

57

58

59

60

61

62

63

64

65

66

67

68

69

70

71

72

73

74

75

76

77

78

79

80

81

82

83

84

85

86

87

88

89

90

91

92

93

94

95

96

97

98

99

100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿԱՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՊ. ԶԱՆԳՈԼԱԴՅԱՆ

2968

Ս Մ Բ Ա Տ
ԽՈՍՐՈՎ - ՇՈՒՄ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայա
ԿՐԵ



ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽԱՐՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼԻԱԼ
ԵՐԵՎԱՆ

1 9 4 3



ՍԵՐԻԱ՝ ԽԱՄԲԱԳՐԱԿՐՅԱՄԲ ակադ. Հ. ՕՐԲԵԼԻՈՒ

Շապիկը՝ նկարիչ Մ. Ն. ՄՈՒՆԻ

Армянский Филиал Академии Наук СССР

Боевые подвиги сынов Армении

Р. М. ДЖАНПОЛАДЯН

СМБАТ ХОСРОВ-ШУМ БАГРАТУНИ

(На армянском яз.)

Изд. Армфан. Ереван, 1943


Վֆ 01080, պատվեր 128, տիրաժ 4000.

Սառարաված է տպելու 29 ապրիլի 1943 թ.

ՆԳԺԿ Տնտեսաժնի տպարան, Երևան.



Գործ նկարիչ Մ. Ն. Մռնսի



595 թվականն էր:

Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի մեծ կրկեսը լեփ լեցուն էր: Ամֆիթատրոնը և հատկապես կայսերական օթյակը ճոխ զարդարված էր: Պետք է տեղի ունենար ինչոր արտակարգ ներկայացում: Հասարակությունն անհամբեր էր: Մոտենում էր ներկայացման սկիզբը: Մեծ հանդիսավորությամբ, բազմաթիվ պալատականներով շրջապատված, իր օթյակն է մտնում Մորիկ կայսրը: Նրա գեմքը գոհունակություն է արտահայտում, շրթունքների վրա փայլում է հաղթական ժպիտը: Ներկայացումն սկսվում է:

Բոլորի ուշադրությունը գամլում է վարագույրին, որի ետեից պետք է դուրս գա մենամարտիկը: Վերջապես հանդարտ քայլերով ասպարեղ է գալիս բարձրահասակ,

ջլապինդ, գյուցազնական արտաքինով, միշին տարիքի մի մարդ: Նրա մարմինը համարյա մերկ է, հագին ունի միայն անդրավարափիկ: Մարմնի գեղեցկությանը ոչ մի բանով չի զիջում նրա գեղեցիկ, արտահայտիչ դեմքը: Խիստ կամարակապ և հոնքերի տակից փայլատակում են նրա սե, նշաճե, հպարտությամբ լի աչքերը. լայն և դուրս ընկած ճակատը պսակվում է սե, դանդուր մազերով, իսկ գեղեցիկ արծվաքիթը մատնում է նրա լեռնական ծագումը:

Հպարտությամբ վեր պահած դլխով, զայրույթից ամուր սեղմած առանձերով, նա դիտում է հանդիսականներին, երբեմն իր խրոխտ հայացքը կայսերական օթյակին ուղղելով:

Այս մարդը մահվան է դատապարտված, ոչ թե սովորական մահվան, այլ գազանների հետ մենամարտի միջոցով:

Փոխադարձաբար իրար ևն դիտում գատապարտյալը հասարակությանը, հասարակությունը գատապարտյալին: Դիմացի դունից իրեն հատուկ դանդաղությամբ դուրս

է գալիս մի հսկա արջ: Վերջինս, կարծես
թե հասկանալով իր դերը, շարժվում է
ուղիղ դեպի կենտրոնում կանգնած մարդը:
Հասարակությունն անհանդստանում է, նա
ուզում է որքան հնարավոր է շուտ հրճվել
վայրենի տեսարանով: Եվս մի քանի քայլ
մի քանի վայրկյան, ահա բարձրանում է
արջի ծանր և բրդոտ թաթը՝ մեկ հարվա-
ծով գետին զլորելու այդ հանդուգն և գո-
ռող մարդուն, որը հանդարտ ու հպարտ
դիտում է արջի յուրաքանչյուր շարժումը:
Հանկարծ լսվում է մի բարձր և բամբ
ձայն, արջը շամում է: Այդ՝ մենամարտիկի
ձայնն էր, որն օգտագործելով հարմար ըռ-
պեն, ըստունցքի ուժեղ հարվածով գետին է
զլորում անշնչացած դազանին:

Հասարակությունն ապշած է:

Բայց ներկայացումը դեռ չի վերջացել:
Անմիջապես ասպարեզ է դուրս բերվում
մի մեծ ցուլ, որը, չորս կողմը դիտելուց
հետո, վաղքով մոտենում է իր զոհին:
Մենամարտիկն արձանացած է տեղում: Ցուլն
իջեցնում է զլուխը. նա պատրաստվում է

իր եղջյուրներով՝ բարձրացնել և ուժեղ հար-
վածով վերջ տալ զոհին։ Հանկարծ եղջյուր-
ները մնում են մենամարտիկի ձեռքին, և
ցավից մռնչացող կենդանին ետ է փախչում։
Ճարպիկ և ուժեղ բազուկները մի ակըն-
թարթում կարողանում են այլանդակել հը-
պարտ կենդանուն։ Զկորցնելով իր սառնա-
սըրտությունը՝ մենամարտիկը բռնումէ ցուլի
ոտքից, ցանկանալով ետ պահել իրենից սար-
սափահար փախչող կենդանուն, սակայն
վերջինիս հաջողվում է դուրս պրծնել, այս
անդամ նրա ձեռքին թողնելով իր կճղակը։
Հասարակության մեջ մի անհանգստու-
թյուն է անցնում, բոլորը հայացքները հա-
ռում են կենտրոնական օթյակին՝ ի՞նչ կասի
կայսրը, ի՞նչ է մտածում նա:

Կայսրը մռայլված է։ Նրա գեմքից ան-
հետացել է ներկայացման սկզբում եղած
ինքնահավան ժպիտը։ Բայց կայսրը վրի-
ժառու է։ Նա չի թողնի թշնամիներին հեշ-
տությամբ ազատվել իր ձեռքից։

Մորիկը հրամայում է մենամարտի դուրս
բերել գաղաններից ուժեղին՝ առյուծին։

Մենամարտիկը դատապարտված է ան-
խուսափելի մահվան:

Արքայավայել քայլերով ասպարեզ է
մտնում ահոելի գաղանը: Մի պահ շփոթված,
հասարակությանը դիտելուց հետո, քաղցած
գաղանը նկատում է իր զոհին և մի գոռող
մոնչուն արձակելով, բացած իր զարնու-
րելի երախը, սրընթաց դեպի մենամարտիկն
է դիմում:

Դահլիճը քարանում է:

Մարդը շաբունակում է կանգնած մնալ
իր հպարտ կեցվածքով: Նա որոշել է մեռ-
նել հերոսի մահով, ցույց տալով իր ուժը և
կամքը:

Հնդամենը մի քանի ոտնաչափ է բա-
ժանում մարդուն գաղանից:

Հանդիսականներից ոմանք կախում են
գլուխները: Մենամարտիկն արդեն վաստա-
կել էր շատերի սերն ու համակրանքը: Ուժի
և գեղեցկության երկրագու բյուզանդա-
ցին չէր կարող տեսնել իր սիրելի հերոսի
մահը:

Հրեշավոր գաղանն արդեն պատրաստ

էր կատարելու իր վճռական ոստյունը, երբ
մենամարտիկը ճարպկությամբ բռնելով նրա
ականջներից, նստում է մեջքին, իր հաղթ
բազուկներով բռնում է կոկորդից և խեղ-
դաման անում նրան:

Այս բոլորը կատարվում է մի ակնթար-
թում: Հասարակությունն սթափվում է ան-
սպասելի տեսարանից այն ժամանակ միայն,
երբ անշնչացած գաղանն արդեն գտնվում
էր հեացող դյուցազնի ոտքերի տակ:

Բարձրանում է մի չտեսնված ցնծու-
թյուն: Ոգևորված ժողովուրդը ոտքի կանգ-
նելով, պահանջում է նյանք շնորհել մահ-
վան դատապարտված հերոսին, այդ բանին
նա արժանի էր, այդ իրավունքը նա վաս-
տակել էր:

Կրկեսային տաքարյուն հասարակության
բուռն պահանջին չկարողանալով ընդդիմա-
նալ՝ Մորիկ կայսը ներում է շնորհում
գաղաններին հաղթողին: Նույն երեկոյան,
ի պատիվ դյուցազնի, կայսը մեծ խնջույք
է տալիս պալատում:

Ո՞վ էր այն մարդը, որը, բերված կիսա-

առասպելական պատմվածքի համաձայն, կարողացաւ ոչ միայն ազատվել անարդ մահից, այլև արժանանալ կայսեր ընդունելությանը:

Դա հայոց անվանի զորավար Սմբատ Բագրատունին էր:

Մանուկ հասակից հայրենի Կողովիտի լեռներում, անտառներում ստացած ուազմական դաստիարակության և իր անհատական ընդունակությունների շնորհիվ, գեռես երիտասարդ Սմբատը հռչակվում է որպես տաղանդավոր զորավար։ Եվ իզուր չէր, որ իր հայրենիքի թշնամիների դեմ տարած բազմաթիվ հաղթանակների համար, երախտապարտ հայ ժողովուրդը մեծարել էր նրան «Բաղմահաղթ» տիտղոսով։

Նրա ուժի մասին ժողովուրդը չտեսնված առասպելներ էր հնարել։ Ժամանակակիցները մի այսպիսի դեպք են պատմում։ Մեկ անգամ, երբ Սմբատը զորքով անցնում էր հնագարյան մի խիտ անտառով, ի զարմանըս բռլորի, իր ուժեղ բազուկներով բռնում է մի մեծ ծառի բարձր ճյուղից, իսկ ոտքե-

ըով սեղմելով ձիու իրանը, կտրում է նրան
դետնից:

Առաջին անգամը չէր, որ բյուզանդացի-
ները հանդիպում էին հայոց անվանի դո-
րավարին: Հաճախ էին տեսել նրան հաղ-
թանակով վերադարձող բյուզանդական բա-
նակի առաջին շարքերում, շրջապատված
կայսերական առանձին պատիմսերով: Ըն-
դամենը մի քանի ամիս տուաջ նույն այդ
հասարակությունը և կայսրը, որոնք այսօր
այդպիսի հետաքրքրությամբ սպասում էին
նրա մահվանը, մեծ շուքով ու նվերներով
կ. Պոլսից Հայաստան էին ճանապարհել
Այն ժամանակ նա ուժեղ էր, կանգնած էր
Խաղայաց (Լաղիստանի) լեռներում ամ-
րացած, ոտից-գլուխ զինված մեկ հաղարա-
նոց գերազանց կարողության տեր ապրս-
տամբ հեծելազորի գլուխ: Բյուզանդա-
կան կայսրը վախենում էր: Հարկավոր
էր հարգել զորքի ցանկությունը, սիրաշա-
հել խաղաղացնել նրան, ավարների դեմ
պատերազմի ուղարկել իսկ Բագրատունուն,

համաձայն զորքի պահանջի, Հայաստան ճառ
նապարհել:

Կայսերական պատիմական ու նվերները
չկարողացան խաբել իր հայրենիքի ազա-
տության համար մարտնչող զորավարին:

Նա վերադառնում է հայրենիք, ուր նրան
սպասում էին ապստամբության պատրաստ
հայերը, անցնում է ժողովրդի գլուխ և բյու-
զանդական կայսրության դեմ համաժողովը-
դական մեծ ապստամբություն բարձրաց-
նում: Ապստամբները պահանջում էին կայս-
րությունից վերականգնել իրենց ինքնու-
րույնությունը, հրաժարվում էին զորք տալ
ավարդների դեմ պատերազմելու և հայտնում
էին՝ «օտարի համար, կովելու փոխարեն
ավելի լավ է մեր հայրենիքի անկախու-
թյունը պահպանելով զոհվել»:

Կայսրը մեծ* զորք կուտակելով՝ դաժան
կերպով ճնշում է ապստամբությունը և գեր-
ված դեկավարներին մայրաքաղաք տեղա-
փոխում: Բյուզանդական ծերակույտը նրանց
նկատմամբ դաժան դատավճիռ է կայաց-
նում՝ մահ կրկեսում, որից, ինչպես տեսանք,

վառավոր հաղթանակով դուքս եկավ Սմբատ-
ալը: Կայսրը ստիպված եղավ ներել Բագրա-
տունուն և նրա համախոհներին. նոր ապօս-
տամբությունից վախենալով, թույլ չտվեց
նրանց Հայաստան վերադառնալ, այլ աքսո-
րեց իր հեռավոր պլովինցիաները. Սմբատին
արիբունի պաշտոնով ուղարկեց Աֆրիկա:

* * *

Ծանը էր Հայաստանի վիճակը 6-րդ դա-
րի վերջին:

Դեռևս երկու դար առաջ նա բաժանվել
էր իր երկու հզոր հարեանների՝ Բյուզան-
դիայի և Պարսկաստանի միջև: Բոնի ուժով
վերացվել էր հայկական թագավորությունը:
Երկիրը վեր էր ածվել այդ երկու թշնամի
պետությունների դարավոր պատերազմների
թատերաբեմի: Զկար ինքնուրույնություն,
չկար կյանքի և գույքի ապահովություն:
Կուլտուրական և կրոնական քիչ թե շատ
ինքնուրույնությունն էլ ենթակա էր ան-
ընդհատ հալածանքների և ոչնչացման վը-
տանդի:

Հայ ժողովուրդը հեշտությամբ ու հնաւ-
զանդությամբ չէր տանում այդ բոլոր հա-
լածանքները։ Հաճախ երկրում բռնկվում
էր ժողովրդական զայրույթը։

Երկու պետություններն էլ գիտակցում
էին Հայաստանի մեծ նշանակությունն
իրենց գարավոր պայքարի ընթացքում,
ուստի յուրաքանչյուրը հատուկ ձևով ցան-
կանում էր իր կողմը դրավել կամ, ծայրա-
հեղ դեպքում, մեկուսացնել նրան։ Այսպես,
օրինակ, երբ պարսկական պետության՝ հա-
յերի հպատակեցման բռնի միջոցները երկ-
րում մեծ դիմագրության հանդիպեցին, նա
փոխեց իր քաղաքականությունը և անցավ
սիրաշահման ու հովանավորման քաղաքա-
կանության։ Սրան հակառակ, բյուզանդա-
կան կառավորությունը Հայաստանի կուլ-
տուրական անկախության և ռազմական ուժի
ոչնչացման քաղաքականություն էր վարում։
Կուլտուրական անկախությունը ցանկանում
էր վերացնել հայկական եկեղեցին բյու-
զանդականին ձուլելով, հայ ժողովրդի վզին
օտար և խորթ դավանանք փաթաթելով։

Այդ նպատակով նա երկպառակություններ
էր մացնում եկեղեցում: Ծագմական ուժի
վերացման քաղաքականությունն էին հե-
տապահում այն հաճախակի զորահավաքնե-
րը, որ կատարում էր Բյուզանդիան Հայաս-
տանում՝ իր արևմտյան սահմաններում ա-
վարների դեմ կռվելու համար: Ահա մի այս-
պիսի նոր զորահավաքն էր առիթը 595 թվա-
կանի՝ Սմբատ Բագրատունու ղեկավարած
հայոց զորքի՝ Խաղտիքում, ապա Հայաս-
տանում բարձրացրած ապստամբության:

Այս քաղաքականությունից զերծ չէր
նաև հայաղդի Մորիկ կայսրը: Նա իր հայ-
րենակիցների ոչնչացման նենդավոր քա-
ղաքականություն էր վարում, նույնն առա-
ջարկելով նաև պարսից արքային:

* * *

Հայ. զորավարի աֆրիկական կյանքի
մասին ժամանակակիցները ոչինչ չեն զբում:
Սմբատի կյանքի հետագա պատմությունն
ոկսվում է պարսկական արքունիքում նրա
հանդես դալու մոմենտից:

Այս հանդամանքն առիթ է տվել բանաւսերներից ոմանց կարծելու, որ բյուզանդական Հայաստանի ապստամբության ղեկավար Սմբատ Բագրատունին և պարսից զորավար Սմբատ Բագրատունին տարբեր անձնավորություններ են: Սակայն, ինչպես փաստերն են ապացուցում, 6-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբին ապրել ու գործել է միայն Մանվել Բագրատունու որդի Սմբատ Բագրատունի Բաղմահաղթ կոչված գորավարը:

Աֆրիկական խղճուկ տրիբունի վիճակը չէր կարող բավարարել իր հայրենիքի աղատության համար պայքարելու և գործելու ցանկությամբ լցված տաղանդավոր զորավարին:

599 թվին Սմբատ Բագրատունին փախչում է աքսորից: Սակայն նա Հայաստան չի վերադառնում. այնուեղ այլևս չկար աղատ գործելու ասպարեզ, չկար այն ուժը, որի վրա հենվելով՝ Սմբատը կարողանար վերականգնել նախնյաց փառքը:

Ինչպես տեսանք, 595 թվի ապստամբու-

թյունը դաժանորեն ճնշելուց հետո, զեկա-
վար կորիղը հեռացվել էր Հայստանից, մի
չտեսնված հալածանք էր սկսվել բնակչու-
թյան դեմ և առժամանակ վերացվել էր
նոր ապստամբություն բարձրացնելու հնա-
րավորությունը:

Միակ վայրը, ուր կարող էր ապստա-
նել Սմբատ Բագրատունին, Պարսկաստանն
էր:

Պարսկական իշխանության հովանավո-
րությունն էին ստանում նաև այն բազմա-
թիվ հայերը, որոնք չկարողանալով տանել
բյուզանդական կայսրության հալածանք-
ները, հեռանում էին հայրենիքից:

Առաջարկելով իր ծառայությունը պար-
սից արքային, Սմբատ Բագրատունին նպա-
տակ ուներ ձեռք բերել նրա սերն ու հա-
մակրանքը և օգտագործելով իր դիրքը՝ գեթ
մի փոքր թեթևացնել հայրենիքի և հայրե-
նակիցների վիճակը:

599 թիվը պարսից Խոսրով Փարվեդ
արքայի (590—628) համար շատ տագնա-
պալից տարի եղաւ:

Երկրում ուժեղացել էին դավադիր տար-
բերը, նրանք իրենց շուրջն էին համախմբել
մեծ ռազմական ուժ, ամրացել էին հյու-
սլուային լեռնային շրջաններում և մեծ
վտանգ՝ էին սպառնում Խոսրովի իշխանու-
թյանը: Արքայից արքայի մի շարք փոր-
ձերը՝ ճնշել ապստամբությունը և ոչնչաց-
նել իր գահին սպառնացող մեծ վտանգը՝
անցել էին անհաջող: Ապստամբությունը
գնալով տարածվել էր: Պարսից արքայի
համար այդպիսի ծանր պահին իր ծառա-
յությունն էր առաջարկում Սմբատ Բագ-
րատունին:

Արքան նրան ընդունում է գրկաբաց:
Տալիս է իշխանավայրել պատիվներ, հանձ-
նում է նրան Վրկանաց աշխարհի մարզպա-
նությունը, արամադրում է մեծ թվով լավ
զինված զորք, արժանացնում է նրան պարս-
կական արքունիքում գոյություն ունեցող
ռազմական բարձրագույն պատվին՝ տալով
իր հոր՝ Որմիզդ արքայի սուրն ու գոտին:

Հայոց աշխարհի Բաղմահաղթ զորավարի
քաջությունները լավ են առաջ էին պարսից

արքային։ Դեռևս 590 թվին, երբ Սասա-
նյան դինաստիայի դեմ Վահրամ Զորինի
գլխավորությամբ բարձրացած ապստամ-
բության ժամանակ սպանել էին Խոսրովի
հորը՝ Որմիղդին, և նվաճել արքայական
գահը, Սմբատ Բագրատունին մեկն էր այն
հայ զորավարներից, որոնք բյուզանդական
զորքի հետ միասին ճնշել էին ապստամ-
բությունը և արքայական գահը վերադարձ-
րել Խոսրովին։ Երախտապարտ արքան նշե-
լով այդ հաղթանակը, թանգարժեք նվեր-
ներ էր տվել կովում առանձնապես աչքի
ընկած Սմբատ զորավարին։

Այժմ, այդ ծանր օրերից տաս տարի անց,
նորից նրան է հանձնվում պարսկական
գահի թշնամիների բախտը։

Ապստամբներն ամրացել էին կառողից ծո-
վի հարավային Ամաղ, Ռոյետ, Տապարաս-
տան լեռնային շրջաններում (Գիլան, Մա-
ղանդարա)։ Այս շրջանները ընականից ա-
նառիկ բերդի դիրք ունեին։ Արևմուտքից և
հարավից շրջապատված էին դժվարանցա-
նելի լեռներով, միակ ճանապարհը դեպի այդ

երկրներն անցնում էր Վրկանաց աշխարհ-
հով, ուր և մարզպան է նշանակվում Սմբատ
Բագրատունին: Այսպիսով՝ Սմբատը, ապօ-
տամբությունը ճնշելու համար զորքի հետ
միասին ստանում է նաև այս կարևոր ռազ-
մական վայրի մարզպանությունը: Ամրա-
նալով Վրկանում, կտրելով միակ ճանա-
պարհը, որով ապստամբները կարող էին
կազմել դրսի աշխարհի հետ, կարճ ժա-
մանակում հաջողվում է ճնշել ապստամբու-
թյունը:

Խաղաղացնելով երկիրը, Սմբատ Բագ-
րատունին անցնում է իր մարզպանական
պարտականություններին:

Վրկանաց աշխարհը գտնվում էր Պարս-
կաստանի հյուսիսային սահմանի վրա, Կաս-
պից ծովի հարավ-արևելքում: Հյուսիսից նը-
րան սահմանակից էին միջին-ասիական քոչ-
վորները, իսկ արևմուտքից՝ Պարթևաստանի
այն շրջանները, որոնք իրենց աշխարհագրա-
կան դիրքի հետեանքով հաճախ որպես ա-
ռաջաստարան էին ծառայում դավադիր տար-
բերի համար: Այս երկու անհանգիստ հարե-

վանները ոտնատակ տալով Վրկանաց երկիւ
ը, վեր էին ածել մի քայքայված և հետամնաց
ծայրամասի: Վրկանաց երկիրը փաստորեն
այն վայրն էր, որը կարող էր երկրի խա-
ղաղության կարգավորչի դեր խաղալ, եթու
վերականգնվեր քայքայված տնտեսությու-
նը և ունենար ուժեղ ռազմական զեկավա-
րություն: Այսպիսին պետք է հանդիսանար
Վրկանի նոր մարդպանը:

Սմբատ Բագրատունին երկրի աղքատու-
թյան աստիճանի հասած տնտեսությունը
վերականգնելու նպատակով ծավալում է
մի չտեսնված եռանդուն աշխատանք: Կարձ
ժամանակում նրան հաջողվում է վերա-
կանգնել քայքայված տնտեսությունը: Ռազ-
մական տեսակետից երկրն ապահովելու
համար ձեռնարկում է ամրությունների կա-
ռուցման գործին: Զլինելով ուժի և անհա-
տական քաջության հլու երկրագու, նա
չափազանց մեծ աշխատանք է թափում
ռազմական կաղըեր պատրաստելու համար:
Առանձնապես սիրով և հոգտարբությամբ
եր պատրաստում նու հայ մարտիկներին,

նըանց նվիրելով հայրենիքի նկատմամբ
ունեցած իր ողջ սերն ու քնքշությունը:

Մարզպանն իր պալատում շրջապատված
էր բազմաթիվ հայրենակիցներով: Վրկա-
նաց երկիրը դարձել էր այն վայրը, ուր
կարող էր ապաստանել յուրաքանչյուր ոք,
ում սիրտը բարախում էր իր հայրենիքի
ազատության համար:

Վրկանաց երկրում Սմբատի կատարած
մի շատ շնորհակալ աշխատանքի մասին ժա-
մանակակիցներն առանձնապես գովասան-
քով են խոսում:

Դեռ վաղ ժամանակներից պարսկական
իշխանությունը ուղամական նպատակներով,
հատկապես հյուսիսային քոչվոր քուշաննե-
րի և հեփթաղների դեմ կռվելու համար,
իր արևմտյան շրջաններից հյուսիս էր գաղ-
թեցրել մեծ թվով հայեր, քրդեր, կամ, ինչ-
պես ժամանակակից հայերն էին անվանում՝
«ազգն կողըեանց», և ընակեցրել սահմանա-
կից անապատում: Հեռու հայրենիքից, օտարքի
իշխանության տակ, ձայրակեղ աղքատու-
թյան ու թշվառության մեջ, սրանցից շա-

տերը համարյա մոռացել էին իրենց մայ-
րենի լեզուն, սովորությունները և կրոնը:
Տառապյալներին օգնելու անհուն ցանկու-
թյամբ լցված Բաղրատունու համար սա մի
չտեսնված ասպարեզ էր: Մեծ ջերմությամբ
նա ձեռնարկում է մի խոշոր կուլտուրական
դործի՝ գաղթականների համար բաց է ա-
նում մայրենի լեզով դպրոցներ: Դասա-
վանդելու համար Հայաստանից հրավիրում
է ուսուցիչներ: Վերականգնում է ազգային
եկեղեցին, նշանակում առաջնորդ:

Սմբատ Բաղրատունին Վրկանաց երկ-
րում իր գործունեությամբ ցույց տվեց, որ
նա ոչ միայն լավ գորավար է, այլև պե-
տական ականավոր գործիչ: Սակայն Բաղ-
րատունին շուտով ստիպված է լինում
թողնել իր խաղաղ շինարարական աշխա-
տանքները և նորից զենք վերցնել:

599 թ. ապստամբությունից հետո դա-
վագիրներից ոմանց հաջողվել էր խուսափել
Սմբատի սրից ու արքայից արքայի հալա-
ծանքներից և ապաստանել Պարսկաստանի
վաղեմի թշնամի քուշանների մոտ:

Քուշաններն ու հեփթաղները քոչվոր
ժողովուրդներ էին և բնակվում էին Միջին
Ասիայում։ Պարսկաստանի սահմանների վրա
կատարած նրանց հաճախակի հարձակում-
ները մեծապես անհանդստացնում էին պար-
սից իշխանությանը։ Դավադիրներին հա-
ջողվում է բանակցել սրանց թագավորների
հետ և ձեռք բերել ուղղմական մեծ ուժ։
Միանում են նաև պարսկական մի քանի
իշխաններ։ Դավադիրների նպատակն էր
նվաճել արքայական իշխանությունը։ Հս-
կըզրում նրանք իրենց տրամադրության
տակ ունեին շատ մեծ և ուժեղ բանակ։
Սակայն արշավանքի հենց սկզբին, գեռես
պարսկական սահմանը չհասած, դեկավար-
ների մեջ երկապահություն է ծագում,
որին զոհ են գնում պարսկական մի քանի
իշխաններ։ Իսկ նրանք, որոնց հաջողվել էր
խուսափել իրենց ընկերների բախտից, զոր-
քով վերադառնում են Պարսկաստան և ամ-
բանում կոմը շրջանի և եկեղանդ գյուղում։
Նրանք գրավում են շրջակայքի ուղղմական
նշանակություն ունեցող բարձունքները և

իրենց համար ամուր դիրքեր՝ ստեղծում։
Բագրատունին, թշնամու հետագա ուժեւ-
ղացումը կանխելու նպատակով, Վրկանում
ունեցած իր փոքրաթիվ բանակով հար-
ձակվում է ազստամբների ճամբարի վրա։
Նախօրոք ամբացած թշնամու հանդեպ Սըմ-
բատի բանակը շատ աննպաստ պայմանների
մեջ է ընկնում։ Տեղի է ունենում երկա-
րատե և արյունալի ճակատամարտ։ Իր զո-
րավարի անհատական քաջությամբ և անձ-
նազոհությամբ ոգեսորված պարսկական բա-
նակը մարտնչում է հերոսաբար։ Սակայն
Բագրատունին ստիպված է լինում նահան-
ջել։ Չնայած կրած պարտության, պարսիկ-
ները շատ մեծ կորուստներ են պատճառում
թշնամուն և առժամանակ զրկում են նրան
նոր ելույթի հնարավորությունից։

Այս անձնազոհ մարտի համար արքան
անձամբ շնորհակալություն է հայտնում
Սմբատին։

Սմբատ Բագրատունին նոր ճակատա-
մարտի եռանդուն պատրաստություն է տես-
նում։ Մի քանի անգամ ավելացնում է բա-

նակը, զի՞նում է ժամանակի ամենաընտիր
ղենքերով՝ նետերով, զրահներով, վահան-
ներով և այլն: Կազմակերպում է մի քանի
ռազմարշամբեր, որտեղ իր մարտիկներին
սովորեցնում է մարտի բոլոր մանրամաս-
ները: Այսպիսով, ստեղծում է ուժեղ և քաջ
բանակ: Պարապ չէին նաև թշնամիները:
Նրանք նորից հաշտվում են քուշանների
հետ, իրենց կողմն են գրավում մի քանի
նոր իշխանների և ամրանում լեռներում:

Երկրորդ ճակատամարտը տեղի է ունե-
նում Տապարաստանում: Թշնամու մի քանի
նենգ փորձերը պարսից բանակի նկատմամբ
անհաջողության են հանդիպում, և Սմբատ
Բագրատունու զեկավարած բանակը փայ-
լուն հաղթանակ է տանում: Ոչնչացվում է
ապստամբների ռազմական ուժը: Կովում
սպանվում են գալադիր իշխաններից շա-
տերը, իսկ կենդանի մնացածները ծնկաչոք
ներում են խնդրում Սմբատից:

Բանակի հաղթանակն արժանավոր կեր-
պով նշվում է Խոսրով արքայի կողմից: մե-
ծամեծ նվերներ ու պատիվներ է տրվում

բանակին և նրա քաջակորով ղորավարին: Սմբատ Բագրատունին արքունիքում արտակարգ պատիվներ է ստանում: Նշանակվում է հրկրի ավագ մարզպան: Այդ նշանակում էր՝ արքունիքում, արքայական սեղանի շուրջը, բոլոր մարզպաններից վեր, արքայից արքային ավելի մոտիկ պետք է նստեր Վրկանի մարզպանը: Մեծ պատիվների հետ արքան ուղարկում է թանգարժեք նվերներ՝ ոսկե անոթներ, ոսկեկար, ակնակուռ արքայական հագուստներ, մարդարտակար ոտքի ժապավեններ: Սմբատի պատանի որդուն՝ Վարազտիրոցին, որն ապրում էր արքունիքում և վայելում էր արքայի առանձնահատուկ սերը, տալիս է պալատական մեծ պաշտոն:

* * *

Մոտենում էր 608 թիվը: Ութ տարի էր, ինչ Սմբատ Բագրատունին վարում էր Վրկանի մարզպանությունը: Բարելավվել և վերաշնվել էր ավերված երկիրը: Մարզպանը դարձել էր իր զորքի և ժողովրդի

սիրելին: Պարսկաստանի թշնամիների դեմ
տարած բազմաթիվ հաղթանակների շնորհ
հիվ ձեռք էր բերել Խոսրովի համակրանքն
ու սերը: Ժամանակն էր իրականացնել
վաղեմի երազը:

Հայաստանի վիճակը գնալով վատթա-
րացել էր: 603 թ. վերսկսվել էին պարսկա-
բյուզանդական պատերազմները: Երկիրը
նորից վեր էր ածվել պատերազմի թատե-
րաբեմի: Բայքայվել էր շինականի տնտե-
սությունը: Ավերվել էր երկիրը, մհուել էր
կաթողիկոսը: Եկեղեցու մեջ ավելի էին
խորացել Բյուզանդիայի սերմանած երկ-
պառակությունները: Հայաստանում չկար
համերաշխ մի ուժ, որ կարողանար կենտրո-
նացնել ցիր ու ցան եղած նախարարներին:

Հայրենիքն իր Բազմահաղթ զորավարի
կարիքն էր զգում:

Մինչ Սմբատը պատրաստվում էր Հա-
յաստան մեկնելու իրավունք խնդրել
ստացվում է Խոսրով 2-րդի հրովարտակը,
որով Սմբատին պարսից արքունիք էին
հրավիրում: Օգտվելով այս արտակարգ

շնորհից, Սմբատը արքային հայտնում է
իր ցանկությունը: Արքան հարդելով իր
սիրելի զորավարի խնդիրը, թույլատրում է
նրան վերագառնալ հայրենիք: Մեկնելու ի-
րավունքի հետ միասին տալիս է նաև այնտեղ
գործելու արտակարգ լիազորություններ:

608 թ. գարնանը Սմբատը գալով Հա-
յաստան, իջևանում է Դվին մայրաքաղա-
քում: Հայ ժողովուրդը մեծ ջերմությամբ
ընդունում է իր սիրելի զավակին:

Առաջին դորձը, որին ձեռնարկում է
Բագրատունին հայրենիքում՝ կաթողիկոսա-
կան ընտրություններն էին: Հեռատես
քաղաքագետը զիտեր, որ պետականությու-
նից զրկված Հայաստանի համար միակ
կենտրոնը, որի շուրջը կարող էին համար
խմբվել հայրենիքի ազատության համար
պայքարող ուժերը, եկեղեցին էր: Ուստի
անհրաժեշտ էր վերականգնել քայլայված
եկեղեցին, մի ընդհանուր զեկավարության
տակ կենտրոնացնել ցիր ու ցան իշխաննե-
րին և ժողովրդին:

Երկրորդ կարևոր դորձը Դվինի եկեղե-

յական ժողովս էր, որը դատավարուց եկեղեցու բոլոր երկպառակիչներին, երկրի համար ստեղծված ծանր պայմաններուն նրանց անհնաղանդությունը հայրենիքի նկատմամբ դավաճանություն համարելով:

Նախարարական և եկեղեցական ուժերը կենտրոնացնելուց հետո, Սմբատը ձեռնամուխ է լինում քայքայված երկրի վերակառուցման գործին:

Նկարագրելով նրա շինարարական աշխատանքները, ժամանակակից Սեբեսոս պատմիչը մի հետաքրքրական զեպք է պատմում: Սմբատ Բագրատունին Դվին մայրաքաղաքում ձեռնարկում է վաղուց ի վեր հրդեհից ավերված եկեղեցու վերակառուցմանը: Նոր եկեղեցին պետք է կառուցվեր նախկինից ավելի մեծ և ճոխ: Եկեղեցին կառուցվում էր Դվինում գտնվող մարզպանի բերդի կողքին: Անհանգստացած բերդապահը մի նամակ է գրում արքայից արքային և հայտնում, որ «հայոց եկեղեցու այդչափ մոտիկությունը բերդի համար ռազմական տեսականից

վլտանգավոր է»։ Արքան, ի զարմանս տեղական պարսկական իշխանության, պատասխանում է՝ «թողնել եկեղեցին իր տեղում, բերդը քանդել և ուրիշ տեղ շինել»։

Այս փաստը փայլուն ասլացույց է այն հեղինակության, որ Սմբատ Բագրատունին վայելում էր պարսկական արքունիքում։

Մոտ երկու տարի նա զբաղված էր հայրենիքի գործերի կարգավորումով։

Մինչ այդ Պտղսկաստանի արևելքում պատերազմի են ելնում քուշանները և հեփթաղները։ Զհանդիպելով ուժեղ դիմագրության, նրանց հաջողվում է նվաճել Խորասանի արևմտյան շրջանները։ Թշնամու արագ առաջախաղացումը կարող էր կանգնեցնել միայն անվանի զորավարը։

Պարսից արքան սուրհանդակներ ուղարկելով Դիլին, իր մոտ է հրավիրում Բագրատուն։ Մեծ դժվարությամբ բաժանվելով իր հայրենիքից, Վրկանի մարդպանը ներկայանում է Խոսրով արքային։ Վերջինս ընդունելով զորավարին, պատմում է իր արևելյան սահմանների դժվարին վիճա-

կի մասին: Հանձնում է նրան մեծ բանակի հրամանատարությունը, մեծարում է Խոսրովի-Շում նախարարական բարձրագույն տիտղոսով, երկրում տալիս է առևտրական նոր արտօնություններ, զարգարում է նրան մեծ զորավարին ու իշխանին հատուկ զարդարանքներով, տալիս է նրան վայել ոսկեկար ակնակուռ հազուստներ և հատուկ գլխարկ, ճոխ զարդարված ճանապարհորդական վրան, շքեղ երիվարներ: Շրջապատում է նրան արքայական հետևակից ընտրած թիկնապահներով: Խոսրով-Շումի ռազմական շքերթն ավելի ճոխ դարձնելու համար՝ տալիս է նրան քառաձայն փողահարներ, որոնք զորքի առաջից գնալով՝ մեծ զորավարի գալուստը պետք է հայտնեին:

Խոսրով-Շումը լավ զինված և ճոխ զարդարված զորքով գնում է քուշանական պատերազմի: Կոմշում նա իր զորքը լրացնում է Վրկանում գաստիարակած 2000 հեծյալներով:

Պարսից բանակում, ինչպես մյուս պատերազմներում, այնպես էլ այս անգամ,

Սմբատի կողքին նույնպիսի քաջությամբ
կովում էին շատ հայ երիտասարդներ: Այս
պատերազմներն ավելի էին կոփում Սմբա-
տի արքունիքում համախմբված երիտա-
սարդ հայրենակիցներին: Այսպիսիներից
մի քանիսի անունները հասել են մեզ,
օրինակ՝ Վարագ-շապուհ Արծրունի, Մարգիս
Տայեցի, Ապահունի Եղբայրներ, Պուամ
Գողթնացի և ուրիշները: Ստանալով պարս-
կական մեծ և ուժեղ բանակի մոտենալու
լուրը, թշնամին դիմում է փախուստի:

Բագրատունին չէր կարող հանդուրժել
որ այդքան կոտրած, ավերածություն և
դժբախտություն տարածող բանակը հեշ-
տությամբ աղատվի իր ձեռքից: Հետապըն-
դելով քուշաններին, Խոսրով-Շումը ստի-
պում է նրանց ընդունել ճակատամարտը:
Թշնամին պարտվում է: Քչերին է հաջող-
վում փախչել մարտի դաշտից:

Հեռատես զորավարը գիտեր, որ թշնա-
մու ուժը վերջնականապես ոչնչացված չէ,
որ նոր հարձակման վտանգն անխուսափելի
է: Հանկարծակի չգալու համար, նա իր

բանակը չի հեռացնում Խորասանից, այլ
տեղափոխում է Տոս շրջանի Ապր-Շահար
(Նիշապուր) քաղաքը, իսկ ինքը իր 300
թիկնապահների հետ ամրանում է Խոռիս
գյուղաքաղաքի բերդում:

Սմբատի կասկածներն իրականանում են:
Քուշանները վերականգնելով իրենց ցիր
ու ցան և ջարդված զորքը, դաշնակցելով
հյուսիսային թուրքական Մեծ Խաքանի
հետ, ստանալով նրանից 30 բյուր զորք,
դալիս, ճամբար են դնում պարսից սահմանի
մոտ, վեհուոտ գետի ափին: Բաժանվելով
մանր խմբերի, նրանք արշավում են արե-
մուտք, վարելով իրենց սիրած թալանչիա-
կան պատերազմը: Տեղեկանալով, որ Բագ-
րատունին փոքրաթիվ զորքով գտնվում է
Խոռիսում, քուշանները պաշարում են այն:

Սմբատ Բագրատունու համար ստեղծ-
վում է անելանելի վիճակ. ճակատամարտ
ընդունել հնարավոր չէր: Հարկավոր էր մի
կերպ դիմադրել: Գյուղաքաղաքը, բացի իր
կենտրոնում ունեցած բերդից, ուր նստած
էր Բագրատունին իր թիկնապահներով,

շըջառատված էր նաև ամուր պարիսպներով։ Բայց առանց դրսից օգնություն ստանալու՝ դիմադրությունն անմտություն կլիներ, ուստի Խոսքով-Շումը մշտկում է ռազմական գործողությունների մի այսպիսի ծրագիր։ Թիկնառականներին, պարսիկ Դատոյիանի հրամանատարությամբ, թողնելով Խոսքառում, ինքը պետք է պատռեր թշնամու պաշտող զորքերի օղակը և գնար Ապր-Շահը, մինչ Դատոյեանի խումբը խուսափելով բաց ճակատամարտից, պետք է դիմադրեն թշնամու հարձակումներին, Սմբատը զորքով կգար և կպաշտեր քուշաններին դրսից և, այսպիսով, ծուղակ ընկած թշնամին հեշտությամբ կոչնչացվեր։ Այս ծրագիրն իրականացնելու համար Սմբատ Բագրատունին երեք հավատարիմ անձանց հետ (իշխաններ Սարգիս Դիմաքսյան, Սարգիս Տրդատունի և գեղջուկ զինակիր Սմբատիկը), գիշերով պատռում է թշնամու ամուր օղակը և շտապում Ապր-Շահար։

Մինչ Սմբատը բանակի հարձակման

պատրաստություններ էր տեսնում, Դատո-
յեանը զանց առնելով հրամանատարի կար-
գագրությունը, անցնում է հարձակման:
Ինչպես և պետք էր սպասել, մարտը վեր-
ջանում է պարսիկների պարտությամբ,
Այլես դիմադրության չհանդիպելով՝ թշնա-
մին հասնում է Ռեյ ճանապարհին կողոպ-
տելով և ավերելով քաղաքներն ու գյուղերը:

Բայց շուտով վրա է հասնում Բագրա-
տունին իր բանակով և հետապնդում թըշ-
նամուն: Վերջինս սարսափահար փախչում է:
Պարսից զորքը հասնելով քուշանների հետե-
մից, ստիպում է ընդունել ճակատամարտը:

Սովորաբար ժողովուրդն իր սիրելի հե-
րոսի շուրջը, նրա անձնական քաջությունն
ու հերոսությունն էլ ավելի շեշտելու հա-
մար, ամեն տեսակի առասպելներ է հնա-
րում, և քանի որ Սմբատ Բագրատունին
իր սիրագործություններով, հերոսությամբ,
ազգի և այլ տառապյալների համար կա-
տարած բազմաթիվ գործերով սիրելի էր
դարձել ժամանակակիցներին, նույնպես
արժանացել է այդ բախտին:

Սերեսս պատմիչը նկարագրելով քուշանական այս ճակատամարտը, նրա բարեհաջող ելքն ամբողջովին վերագրելով Բագրատունու անձնական ուժին, գրում է.

Երբ արդեն բանակները պատրաստ էին ճակատամարտելու՝ դուրս է դալիս քուշանաց թագավորը և դիմում է Ամբատին.

— Ի՞նչ օգուտ խառնիխուռն ամբոխով պատերազմ մտնել, կոտորել զորքը և ոչ մի բանով ցույց չտալ մեր անձնական քաջությունը։ Եկ, ավելի լավ է միասին մենամարտենք։ Ապա գոռողությամբ ավելացնում է՝ այսօր ցույց կտամ քեզ իմ քաջությունը։

Իր բազուկներով առյուծին խեղզող հերոսը չէր վախենում մարդու հետ զենքով մենամարտելուց։ ԽոսրովՇումը համեստաբար պատասխանում է՝

— Ահավասիկ պատրաստ եմ մեռնելու։

Սկսվում է մի հետաքրքրական տեսարան։ Երկու բանակները քարացած սպասում են իրենց առաջնորդների մենամարտին։ Մեկի կամ մյուսի հաղթանակը պետք է վճռեր պատերազմի ելքը։

Մենամարտը տեսում է բավական երկար: Երկուսն էլ զբահավորված էին և իրենց ուժով համարյա հավասար: Վերջի ի վերջո Սմբատին հաջողվում է պատռել իր գոռող թշնամու ընտիր զբահը և սպանել նրան:

Քուշանական զորքը տեսնելով իրենց արքայի պարտությունը, սարսափահար ետ է փախչում, իսկ ոդեորված պարսիկները հետապնդում են նրանց:

Սերեսի պատմածից պարզվում է, որ քուշանական պատերազմի երրորդ փուլում պարսից բանակը, շնորհիվ իր զորավարի ուազմական տաղանդի և անձնական քաջության՝ կարողանում է ամոթալի պարտության մատնել թշնամուն:

Պարսկական բանակը հաղթական երթով առաջ շարժվելով, ետ է վերցնում ոչ միայն քուշանների նվաճած պարսկական շրջանները, այլև շատ նոր երկրներ, հասնելով մինչև քուշանների մայրաքաղաք Բահլ-Շահաստանը (Բալիս Ավղանիստանում), ճանապարհին գրավելով և ոչնչացնելով շատ

բերդեր։ Մեծ ավար ձեռք բերելով՝ վերա-
դառնում են Պարսկաստան։

Խոսքով-Շումի հաղթանակի լուրը կայ-
ծակի տրագությամբ հասնում է պարսկա-
կան արքունիք։ Թշնամու պարտությունը
մեծ ցնծություն է առաջացնում։ Մեծ Դաս-
տակերտ վիթխարի ամրոցը հեքիաթային
տեսք է ընդունում։ Պարսից արքան տո-
նում է մեծ հաղթանակը։ Զորավարի ըն-
դունելության պատրաստություններ են
տեսնում։ Ամրոցի դահլիճն է բերվում ճոխ
զարդարված փղի վրա նստած Ամբատի
որդի Վարագախիրոցը, որին արքան հոր
պատվին Զավիտեան-Խոսրով տիտղոս էր
տվել։ Տոնախմբությանը մասնակցող բազ-
մահազար ժողովրդին երջանիկ արքան դրամ
և քաղցրավենիներ էր բաժանում։ Մի չտես-
նըված խրախճանք էր։ Մեծ զորավարի
հաղթանակը տոնում էին պարսից ար-
քայի բոլոր հաղատակները։

Հաղթողներին դիմավորելով շուքով և
հանդիսավորությամբ, արքունիք են տանում։
Մեծամեծ պատիմիներ է տրվում զորքին

և նրա բազմահաղթ ու քաջ դորավարին, Խոսրով Փարվեզ արքան Սմբատ Բագրատունուն կարգում է իր արքունիքի երրորդ նախարարը և քանի որ զորավարն արգեն պատկառելի տարիքի էր և իր ծառայություններով վաստակել էր արժանի հանգիստը, արքան առաջարկում է մնալ արքունիքում և շքեղության ու պատիմական մեջ վայելել իր կյանքի մնացած տարիները:

618 թ. հոկտեմբերի 26-ին պարսկական Մեծ Դաստակերտ ամրոցում մեռնում է Սմբատ Բագրատունի Բազմահաղթ, ԽոսրովՇում զորավարը: Համաձայն հանգուցյալի կտակի՝ նրա դին տեղափոխվում է Հայաստան, հայրենի Կոգովիտ գավառի Դարյունք ավանը (Բայազետ) և, թաղվում Բագրատունիների տոհմական գերեզմանոցում:

Ժամանակի քաղաքական պայմանները հնարավորություն չտվին տպնիվ հայրենասերին գործելու իր հայրենիքում, հայրենյաց աշխարհի երջանկության համար: Սակայն լինելով օտարի իշխանության տակ, կովելով Պարսկաստանի թշնամիների դեմ,

բազմաթիվ հաղթանակներ տանելով, մեծ
պատիմներ ստանալով պարսից արքայի
կողմից, նա երբեք չէր մոռանում իր նվի-
րական նպատակը: Ամեն մի հարմար ա-
ռիթ օգտագործում էր հայրենիքին օգնե-
լու համար: Իր բանակում նա սնում և
մարդում էր շատ հայ երիտասարդների,
որոնք հետազայում հայրենիքի թշնամինե-
րի դեմ մղած կռիմներում փառքով պսակե-
ցին նրա հիշատակը: Ժողովուրդը չմոռացավ
նրան: Նա մեծարեց, սիրեց իր հերոսին, ար-
ժանացրեց՝ իր ժամանակի ամենամեծ պատ-
վին՝ դասեց եկեղեցական սրբերի շարքը:
Նրա անձնավորության շուրջը հյուսեց բազ-
մաթիվ առասպելներ: Դարեր շարունակ սե-
րընդե սերունդ պատմվեց, արտագրվեց
նրա կյանքի պանծալի պատմությունը և
մեծ խնամքով, հոգատարությամբ ու գուր-
գուրանքով պահվեց մինչև մեր օրերը:

Այսպես է գնահատում ժողովուրդը իր
հայրենիքի համար մարտնչող հերոսին:



1944. Ա. 9

ԳԱԱ Դիմումաբար Գիտ. Գրադ.



FL0624289

(204)

ԳԻՒԾ 1 ՌՈՒԲ.

Տ. ՅԱՆԿԵԼՅԱՆ
1944. 12. 4

Կում
426

(204)

ԳԻՒԾ 1 ՌՈՒԲ.

Տ. ՅԱՆԿԵԼՅԱՆ
1944. 12. 4

Կում
426